- Mkrtumyan, L., Alvanic' (Ganjasari) kat'olikosutyuna XVII–XIX dd. [De Aghuanische Katholikossat von Gandzasar in 17. –19. Jh.], Erevan 2006.
- Yakobean, A., Ark'ayatohmern u išxanatohmern Bun Ałvank'um ew Hayoc' Arewelic' kolmank'um antikič' minč'ew ŽG dar [Die Königs- und Fürstenfamilien in Aghvank und in Ostarmerischen Gebieten seit der Antike bis zum 13. Jh.], Erevan 2006.
- Tašan, Yakovbos, C'uc'ak hayerən jeřagrac' matenadaranin Mxit'areanc' i Vienna [Liste der armenischen Manuskripte bei den Mkhitaristen in Wien], Vienna 1895.
- Ulubabyan, B., Hayoc' Arevelic' kolmanc' ekelec'in ev mšakuyt'ə [Die Kirche und Kultur der Ostarmerischen Regionen], Erevan 1998.
- Берже, Ад. (изд.), Акты, собранные Кавказской археографической комиссией, Архив Главного Управления Наместника Кавказского, том V, Тифлис 1873.
- Положение об управлении делами Армяно-Григорианской церкви в России (11.03.1836), unter: <https://erevangala500.com/upload//pdf/1324321669.pdf> (letzter Zugriff: 19.7.2023)
- Юзефович, Т. (изд.), Договоры России с Востоком. Политические и торговые, С. Петербург 1869.

Autor

Archimandrit Sahak Shakaryan

Vikar der Diözese der Armenisch-Apostolischen Kirche von Arzach und Abt des Klosters von Hl. Gandzasar, Berg-Karabach.

Übersetzer: Harutyun G. Harutyunyan

Սահակ վրդ. Շաքարյան

Արցախի թեմի համառոտ պատմություն

Հազարամյակներ առաջ Արցախում սկիզբ առած քաղաքակրթությունը ոչ միայն արժեք է ինքն իր մեջ, այլև անբաժանելի մի մասը համաշխարհային պատմության: Եվ այս ամենը վերարժևորվել է և պսակվել Քրիստոսի փշե պսակով այն օրվանից, երբ քրիստոնեությունը թափանցեց Արցախ աշխարհ: Եվ իրապես, Հայոց արևելից կողմանց եկեղեցին իր սզբնավորման պահից եղել և մնում է Առաքելական եկեղեցու սրբավայրերից ու նշանավոր խորաններից մեկը: Խոսքերիս վառ ապացույցն է այն հինավուրց ավանդությունը, որ մեր հավատքի հայր ս. Գրիգոր Լուսավորիչն իր սիրասուն թոռան՝ ս. Գրիգորիսի արյունով հիմնարկեց Արցախի սրբազան այդ խորանը մեր երկրամասում: 5-րդ դարի երկրորդ կեսից այն կոչվեց Աղվանից եկեղեցի, որովհետև Արցախը դարձավ Աղվանից մարզպանության մաս և այդ անվանումը պահպանեց ընդհուպ 20-րդ դարի սկզբները:

Ինչպես տեղեկանում ենք մեր առաքելական եկեղեցու ավանդությունից, Հայաստան աշխարհում քրիստոնեությունը մուտք է գործել արդեն իսկ առաջին դարից և հասել մինչև Հայոց արևելյան կողմերը՝ Արցախ և Ուտիք նահանգները: 7-րդ դ. հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ ս. Թադեոս առաքյալի նահատակությունից հետո նրա աշակերտ Եղիսեն (Եղիշան) Արցախի և Արտազի կողմերից, ուխտի է ճանապարհվում Երուսաղեմ և անձամբ Հակոբոս Տեառնեղբոր ձեռամբ եպիսկոպոսություն ստանալով՝ վերադառնում արևելք ու լրացնում իր ուսուցչի քարոզչական գործը Արցախ և Ուտիք նահանգներում: Սկզբում նա հաստատվում է Չողում (Դերբենդ), ապա անցնում Կուրի աջափնյակ՝ Ուտի գավառի Սոհառն (Սրհառն) քաղաք, այնտեղից էլ Գիս ավան, որտեղ հիմնում է եկեղեցի և հետո ցավոք նահատակվում Ջերգունի կոչվող դաշտավայրի Հոմենք կամ Բոմեն բնակավայրում:¹ Հավատացյալները սրբի մասունքները հավաքում և հողին են հանձնում Ուտեկան գյուղում, իսկ մասունքներից սրբի գլուխը Ստեփանոս քահանան առանձին վայրում է ամփոփում: Հետագայում Վաչագան Գ Բարեպաշտ թագավորը Եղիսենի սրբազան մասունքը 5-րդ դ. վերջին տեղափոխում է Ջրվշտիկ, կառուցում մատուռ-դամբարան, որն էլ հետագայում վերածվում է հայտնի Եղիշե առաքյալի վանքի: Այստեղ է թաղված նաև Արցախի նշված թագավորը՝ Վաչագանը:²

Առաքյալների ժամանակներից Արցախում Քրիստոսի խոսքը քարոզողներից էին

1 Կաղանկատուացի, Աղուանից աշխարհի պատմություն, 9–11:

2 Նույնը, 12: Տաշեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, 60:

նաև ս. Թադեոս առաքյալի աշակերտներ՝ Դադի³ և Խադ⁴ եպիսկոպոսները: Նրանց նահատակության վայրերում ու լույս շիրիմների վրա հետագայում կառուցվեցին միջնադարյան հայ ճարտարապետության հոյակերտ հուշարձաններից Դադիվանքն ու Խադավանքը:

Երբ հայոց Տրդատ Գ արքայի օրոք քրիստոնեությունը 301 թ. հռչակվեց պետական կրոն, արքայական հրամանով Մեծ Հայքի բոլոր իշխանները ս. Գրիգոր Լուսավորչին ուղեկցեցին Կեսարիա՝ Հայոց առաջին կաթողիկոս օծվելու:⁵ Նրանց շարքերում էր Ծավդեից իշխանը Արցախից, որը, Եփրատի ջրերում մկրտվելով և իր հայրենիք վերադառնալով, ջանք ու եռանդ չինսայեց Արցախում քրիստոնեություն տարածելու համար: Հայոց արևելից կողմերում ս. Գրիգորի քարոզչությամբ սկսվում է քրիստոնեության ամրապնդման հաջորդ շրջանը: Արցախի Հաբանդ գավառի Ամարաս ավանդում Լուսավորիչը հիմնադրում է առաջին եկեղեցին իր հովվական դպրոցով:⁶ Սրբավայրի կառուցումն ավարտվում և օծվում է նրա թոռ՝ Արցախի առաջին եպիսկոպոս Գրիգորիսի ձեռամբ:⁷ Վերջինս քարոզում է քրիստոնեությունն Աղվանքում և կառուցում նոր եկեղեցիներ Տրիում: 330-337 թթ. բուն Աղվանքի կողմերում (Մասթթաց թագավորությունում) քրիստոնեություն տարածելու ժամանակ Վաստյա դաշտում նահատակվում է Գրիգորիսը: Հեթանոսները կապում են նրան ձիու պոչից և քարշ տալով սպանում: Գրիգորիսի աշակերտները նրա աճյունը բերում և ամփոփում են Ամարասի եկեղեցու բակում, որը դառնում է ուխտատեղի և եպիսկոպոսական նստավայր:⁸ 489 թ. Վաչագան Բարեպաշտ թագավորը գտնում է Գրիգորիսի գերեզմանը, որի վրա էլ նոր եկեղեցի է կառուցում:⁹

Հայոց Արևելից գավառներում քրիստոնեական դարձի ամրապնդմանը նպաստեց նաև ս. Մեսրոպ Մաշտոցի օրինակով համայնքային դպրոցների հիմնումը, որոնցից առաջինը հաստատվեց հենց Ամարասում: Հայաստառ գրականությունն ու հայաբարբառ քրիստոնեությունն երաշխիքը հանդիսացան ազգային եկեղեցու և հայոց ինքնության հարատևության: Ս. Մեսրոպ աշակերտ Կորյունի վկայությամբ հայոց գրերի աստվածային տեսիլքի թարգման Մաշտոցը հայոց դպրության հետ մեկտեղ հիմնում էր հայկական վանքեր ու ձևավորում վանական միաբանություններ:¹⁰ Ուստի մինչև 5-րդ դ. առաջին կեսը քրիստոնեությունն Արցախում և Ուտիքում դարձավ ամբողջ ժողովրդի հոգու հավատքն ու պաշտոնական կրոնը:

3 Ատրի Միխայել, Ժամանակագրություն, 33:

4 Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, 229-:

5 Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, 29-30:

6 Կաղանկատուացի, Աղուանից աշխարհի պատմություն, 35:

7 Նույնը, 68; Բուզանդ Փաստոս, Պատմություն Հայոց, 428; Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, 170:

8 Կաղանկատուացի, Աղուանից աշխարհի պատմություն, 72: Բուզանդ Փաստոս, Պատմություն Հայոց, 429; Անանուն, Կեսնք և վարք Վաչագան արքայի, 63:

9 Կաղանկատուացի, Աղուանից աշխարհի պատմություն, 73:

10 Կորյուն, Վարք Մաշտոցի, 51:

Արշակունիների հարստության անկումից հետո (428 թ.) Արցախն ու Ուտիքը Լիփինքի, Բաղասական և Մազքթաց աշխարհի հետ կազմել են Հայ առաքելական եկեղեցու գերագահությունը ճանաչող Աղվանից կաթողիկոսություն՝ Կապաղակ, Պարտավ, Ամարաս, Գանձասար հոգևոր կենտրոններով: 428–462 թթ. Պարսկաստանի կողմից իրականացրած վարչական բաժանումով Հայաստանից անջատվեցին Արցախ և Ուտիք նահանգները և կցվեցին նոր կազմավորվող Աղվանից մարզպանությանը:¹¹ Այս երկու նահանգների եկեղեցական վիճակներն անցան Աղվանից եկեղեցու իրավասության տակ: Մինչև 461 թ. Աղվանից կաթողիկոսանիատը գտնվում էր Կապաղակում և ապա մի քանի տասնամյակ շարունակ՝ Չողում:

Աղվանից մարզպանության վերացումից հետո Ուտիքի և Արցախի եկեղեցական թեմերը շարունակեցին մնալ Աղվանից կաթողիկոսության իշխանության ներքո, որի նստավայրը 6-րդ դարասկզբին փոխադրվեց Ուտիքի Պարտավ քաղաք:¹²

Վաչագան Գ-ի հաջող գահակալության շրջանում այս տարածաշրջանում բնականաբար աճեց հայության դերն ու ազդեցությունը: Դրան հատկապես նպաստեցին նրա կատարած եկեղեցական բարեփոխումները, որոնցով Աղվանից մարզպանությունում լայն տարածում գտավ Հայաստանյայց եկեղեցու հիմնադիր և Թադեոս առաքյալի, և Գրիգոր Լուսավորչի, նրա թոռ և Գրիգորիսի, ինչպես նաև և Հռիփսիմյանց ու և Գայանյանց կույսերի պաշտամունքը:¹³

Ավարայրի դարակազմի կառավարման (451 թ.) հաջորդող հակամարտության տարիներին բուն Հայաստանում ծավալված պարսկական-քաղաքական դիկտատուրայի և զրադաշտական-մշակութային բռնությունների ալիքները հասնում են նաև Արցախ: Այնուհետև, 484 թ. կնքված Նվարսակի հաշտության պայմանագրով՝ Հայաստանը որոշակի վարչական ինքնուրույնություն և քրիստոնեությունն ազատորեն դավանելու իրավունք է ստանում: Արցախ-Ուտիքը, անջատվելով անդրկուրյան մնացյալ տարածքներից, ձեռք է բերում վարչական ինքնուրույնություն՝ նշյալ Վաչագան թագավորի գլխավորությամբ: Ինքնուրույնության այդ շրջանում Վաչագանն Արցախում պայքար է սկսում նորահնար աղանդների դեմ և դրանք վերացնելուց հետո տարվա օրերի թվով եկեղեցիներ կառուցում:

Հայոց Արևելից եկեղեցին իր դավանանքի մեջ հաստատուն մնաց նույնիսկ 7-րդ դարում ծավալված պարսկա-բյուզանդական քաղաքական պայքարների հորձանոտում: Աղվանից կաթողիկոսներն եռանդուն դերակատարություն ունեցան երկրի հոգևոր-մշակութային ու քաղաքական կյանքում: Որպես Հայ Առաքելական եկեղեցու անբաժանելի մաս՝ Աղվանից հայախոս եկեղեցին 8-րդ դ. առաջին կեսին հաջողությամբ հաղթահարեց նաև քաղկեդոնականության

11 Հարությունյան, Մեծ Հայքի հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը, 92:

12 Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում, 102–107:

13 Նույնը, 107–108; Վաչագան Բարեպաշտի եկեղեցական ռեֆորմների մասին տես նաև Ղարիբյան, Վաչագանի վեպը և խաչի պաշտամունքի առանձնահատկությունները:

ոտնձգությունը և պահպանեց ազգային եկեղեցական դիմագիծը: Այս ժամանակաշրջանում էր, որ Հայաստանը, այդ թվում և հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգները հայտնվեցին Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Հայ Արևելից եկեղեցու պատմության մեջ 9-12-րդ դարերը կաթողիկոսական աթոռի աստանդականության շրջան էր: Պարտավից կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Տրտու գետի ափին գտնվող Բերդակուր ամրոց և այնտեղ մնաց մինչև 9-րդ դարի կեսերը, ապա տեղափոխվեց Գանձակ, իսկ քաղաքական անբարենպաստ վիճակից ու արտաքին վտանգներից ելնելով՝ այն երբեմն տեղակայվեց Դասնո անապատում, Ուտիքի Միափոր գավառի Խամշի վանքում և նորից Գանձակում: 15-րդ դ. Աղվանից կաթողիկոսական աթոռը տեղափոխվում և վերջնականապես հաստատվում է Գանձասարի վանքում և այդ իսկ պատճառով կոչվում նաև Գանձասարի կաթողիկոսություն, որի առաջնորդները ժառանգաբար դառնում են Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչները:¹⁴

18-րդ դ. վերջին այս կաթողիկոսությունն ունեցել է 1736 վանք ու եկեղեցի: 19-րդ դ. պատերազմների ու գաղթի պատճառով դրանց թիվը նվազել է 1311-ի: Հարկ է նշել, որ սկսած վաղ միջնադարից՝ այդ վանքերին ու եկեղեցիներին կից գործել են դպրատներ ու ճեմարաններ, իսկ Ամարասը, Գանձասարը, Դաղիվանքը, Խաղավանքը, Գոչավանքը, Մեծառանից սուրբ Հակոբն, ինչպես նաև Եղիշե առաքյալի ու Երիցմանկանց վանքերն եղել են ոչ միայն Արցախի, այլև միջնադարյան Հայաստանի զրչության նշանավոր կենտրոններ՝ իրենց հարուստ մատենադարաններով, որոնք նպաստել են Արցախում քրիստոնեության պահպանմանը՝ հակառակ մահմեդականության բռնազավթումներին ու ճնշումներին:

Իրողությունները կտրուկ փոխվեցին երբ 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Արցախն անցավ Ռուսական կայսրությանը:¹⁵ Սկատելիորեն մեծացավ ռուսական իշխանությունների ազդեցությունը նաև տեղի հոգևոր-եկեղեցական կյանքում: Ռուսաստանը մեծապես շահագրգիռ էր իր ազդեցության տակ անցած հայկական երկրամասերում Ամենայն Հայոց կաթողիկոսության իշխանության ամրապնդմամբ: Ուստի պատահական չէ, որ ռուսական իշխանությունները կտրականապես դեմ էին Աղվանից, այսինքն Գանձասարի կաթողիկոսությունն Ամենայն Հայոց կաթողիկոսությունից անջատելուն, որին ձգտում էին տեղի մահմեդական իշխանությունները: Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցին (1809–1830) ռուսական իշխանությունների հավանությանը 1815 թ. վերացնում է Գանձասարի Աղվանից կաթողիկոսությունը և նրա առաջնորդին վերապահում միայն մետրոպոլիտի կարգավիճակ:¹⁶

14 Աղվանից կաթողիկոսության գանձասարյան շրջանի պատմությունը մանրամասն տես Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, 204–255; Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը; Մաղալյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը:

15 Юзефович, Договоры России с Востоком. Политические и торговые, 208–214.

16 Берже, Акты, собранные Кавказской археографической комиссией, № 522, 443; Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը, 206–207:

1828 թ. Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրով կրկին նոր տարածքներ Արևելյան Հայաստանից անցան Ռուսական կայսրության տիրապետության տակ, որի տարածքում էր նաև Սբ. Էջմիածինը, այսինքն Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը: 1836 թ. ռուսական իշխանությունների նախաձեռնությամբ հաստատվեց Հայոց եկեղեցույուրահատուկ կանոնադրությունը, «Պոլոժենիե»-ն,¹⁷ որով Ռուսական կայսրության տարածքում ստեղծվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա վեց թեմ: Նրանց թվում էր նաև Ղարաբաղի/Արցախի թեմը, որն ինչպես արդեն վերը նշել էինք՝ 1815 թ. մետրոպոլիտական կարգավիճակ էր ստացել:¹⁸

1815–1828 թթ. թեմի առաջնորդն էր Սարգիս Հասան-Ջալալյանը:¹⁹ Նրա մահից երկու տարի հետո՝ 1830 թ. Եփրեմ կաթողիկոսի կոնդակով Ղարաբաղի թեմի մետրոպոլիտ է կարգվում նրա եղբորորդի Բաղդասար Հասան-Ջալալյանը (1830–1854 թթ.), իսկ նոր կանոնադրության համաձայն՝ առաջնորդարանը տեղափոխվում է Շուշի: Դրանով այս բերդաքաղաքը պաշտոնապես ճանաչվում է Ղարաբաղի հոգևոր կենտրոն: 1854 թ. Բաղդասար մետրոպոլիտի մահից հետո, միառժամանակ, Ղարաբաղը մնում է առանց հոգևոր առաջնորդի: 1857 թ. թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Գևորգ Վեհապետյանը: 1864 թ. Ղարաբաղի թեմն առաջնորդում է Սարգիս արք. Ջալալյանը, որը 1876 թ. հիվանդության պատճառով թեմի առաջնորդի պաշտոնից ազատվում է իր դիմումի համաձայն: 1876 թ. Արցախի թեմակալի փոխանորդ է նշանակվում Գևորգ վրդ. Սուրենյանցը, 1877–1881 թթ.՝ Արիստակես վրդ. Սեդրակյանը, 1882-ին՝ Անդրեաս արք., որին էլ 1883-ին հաջորդում է Գրիգոր արք. Սազինյանցը: 1887 թ. Գրիգոր սրբազանի՝ Շուշիից հեռանալուց հետո Ղարաբաղի առաջնորդական աթոռը թափուր է մնում: Ռուս չինովնիկների՝ հայոց ներեկեղեցական հարաբերություններին ակտիվ միջամտությունների պայմաններում հետաձգվում էր նոր առաջնորդ նշանակելու խնդիրը: Կարճաժամկետ թեմակալներ են դառնում Կարապետ եպս. Այվազյանը (1887–1889 թթ.), Գարեգին արք. Սաթունյանը (1895–1897 թթ.), ինչպես նաև Անանիա եպս. Համազասպյանը, Աշոտ եպս. Շախյանը, Բենիկ վրդ. և Ջավեն եպս. Բաբայանը:

1916 թ. մայիսի 20-ի Ամենայն Հայոց Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի (1911–1930) կոնդակով Ղարաբաղի թեմակալ առաջնորդ է նշանակվում Վահան եպս. Տեր-Գրիգորյանը: 1918 թ. Վահան սրբազանի՝ Մայր Աթոռ ուղարկված նամակում մանրամասն ներկայացվում է թուրքական հարձակումների հետևանքով թեմում ստեղծված ծանր կացության, վանքերի ու եկեղեցիների կողոպուտի ու ավերածության մասին: Դրությունն օրհասական է դառնում 1920 թ. մուսաֆաթական իշխանության եղեռնագործության օրերին, որի ժամանակ սպանվում է 5000 հայ: Սպանվում են նաև թեմի առաջնորդը և թեմական վարչության անդամներից

17 Положение об управлении делами Армяно-Григорианской церкви в России:

18 Երիցեան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, 567:

19 Այստեղ և ներքևում առաջնորդների վերաբերյալ բոլոր տեղեկություններն ըստ Արցախի թեմի արխիվի:

շատերը: Բարբարոս հարձակվողները, կտրելով Վահան եպս. Տեր-Գրիգորյանի գլուխը, պտտեցնում էին քաղաքում՝ ի տես զազանացած խուժանի:

1920 թ. մայիսի 26-ին Ղարաբաղը հայտարարվում է խորհրդային, իսկ 1921 թ. հուլիսի 5-ին էլ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ՌԿ(բ) և կենտկոմի կովկասյան բյուրոի կամայական որոշմամբ բռնակցվում Ադրբեջանին: Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը փաստորեն ամբողջությամբ հայտնվում է Խորհրդային Ադրբեջանի իշխանության տակ, ինչի պատճառով և սկսվում են բռնաճնշումները հայության և եկեղեցական կառույցների հանդեպ: Վահան եպս. Տեր-Գրիգորյանի ողբերգական վախճանից հետո երկու տարի թեմը ղեկավարվում էր առաջնորդական փոխանորդների՝ Բյուզանդ ծ. վրդ., և ապա Սուրեն վրդ. կողմից:

1922 թ. մարտի 27-ին Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակով Արցախի թեմի առաջնորդ է նշանակվում Անանիա արք. Համազասպանը՝ նստավայր ունենալով Վարանդայի Ավետարանոց գյուղը: Պատկառելի տարիքում գտնվող Անանիա սրբազանն, անկարող լինելով ծառայելու ստեղծված ծանր պայմաններում, 1924 թ. մայիսի 27-ին հրաժարական է ներկայացնում Մայր Աթոռի զահակալին: Կաթողիկոսը, ընդառաջելով նրա խնդրանքին, 1924 թ. հունիսի 3-ին ազատում է նրան առաջնորդական պարտականություններից:

1925 թ. կաթողիկոսի կոնդակով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Վրթանես ծ. վրդ. Հակոբյանը նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ և Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր՝ նստավայր ունենալով Գանձասարի վանքը: Նորանշանակ առաջնորդն Արցախ է հասնում 1925 թ. ապրիլի 7-ին և, չնայած թեմի սուկալի վիճակին, իր եռանդի շնորհիվ բազմաթիվ աշխարհաշեն նախաձեռնություններ է կյանքի կոչում: Իր շուրջն է համախմբում նվիրյալ հոգևորականներին և ձևավորում հոգևոր ատյան: Միաժամանակ նա հաստատում է բարյացակամ հարաբերություններ տեղական իշխանությունների հետ, հիմնում թեմական խորհուրդ, տասից ավելի գործակալություններ, վանահայրեր նշանակում, հաշվառում բոլոր վանքերի գույքը, հովվական այցելություններ ու հոգևոր միջոցառումներ կազմակերպում Խաչենի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գյուղերում:

1925 թ. հունիսի 16-ին Արցախի թեմական խորհրդի անդամները դիմում են Գևորգ Ե կաթողիկոսին՝ խնդրելով հայր Վրթանեսին ձեռնադրել եպիսկոպոս: Կաթողիկոսը, ընդառաջելով և հաշվի առնելով Արցախի թեմի առաջնորդի կատարած աշխատանքները, 1928 թ. նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Եպիսկոպոսական աստիճանը թեմակալ առաջնորդին հնարավորություն է տալիս նոր քահանայական օժումներ կատարել և համալրել թեմի եկեղեցականների թիվը:

Չնայած այդ ամենին, Արցախի թեմը փակման վտանգի առաջ կանգնեց 20-րդ դարի հենց նույն քսանական թվականներին, որում իր մասն ու բաժինն ուներ ադրբեջանական խորհրդային իշխանությունը: Արդեն իսկ 1929 թ. փակվել էին թեմի գրեթե բոլոր եկեղեցիները, իսկ քահանաների մեծ մասը ստիպված կարգաթող էր եղել: 1930 թ. փետրուարի 7-ին Վրթանես սրբազանը ձերբակալվում է կեղծ մեղադրանքներով և երկու տարի մնում Շուշիի և ապա Բաքվի բանտերում: 1932

Թ. հունվարի 1-ին Արցախի առաջնորդը վերջապես ազատվում է կալանքից, բայց Ադրբեջանի կառավարության կողմից մեկընդմիջտ արգելվում է նրան վերադառնալ Արցախ և կատարել առաջնորդական պարտականությունները: 1930 թ. Բաքվի պաշտոնական հրամանով փաստացիորեն փակվեց Արցախի թեմը և դադարեց Հայ եկեղեցու զանգերի ղողանջն այս պատմական թեմում: Փակվեցին բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Նրանց մի զգալի մասը կողոպտվեց ու ավերվեց:

Միայն 1989 թ.՝ Հայաստանի անկախության նախաշեմին, Ամենայն Հայոց Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի (1955–1994) կոնդակով վերաբացվեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը: Որպես թեմի հոգևոր տարածք՝ հաստատվեցին 1836 թ. թեմական սահմանները: Առաջնորդ նշանակվեց Պարզև Եպս. Մարտիրոսյանը: Թեմի առաջնորդանիստ դարձավ Գանձասարի վանքը, որտեղ երկար դադարից հետո 1989 թ. հոկտեմբերի 1-ին վերստին մատուցվեց սուրբ պատարագ: Վերաբացված թեմում առաջին տարիներին իրենց ծառայությունն են բերել Միքայել վրդ. Աջապահյանը (այժմ արքեպիսկոպոս, Շիրակի թեմի առաջնորդ), Վրթանես արք. Աբրահամյանը (այժմ՝ Եպիսկոպոս, Արցախի թեմի առաջնորդ): 1992 թ. մայիսի 8-ին, Արցախյան առաջին պատերազմի դժվարագույն փուլում, երբ ազատագրվեց Շուշին, այն վերստին դարձավ Արցախի հոգևոր կենտրոնը: Վերականգնվեց ու վերածովեց Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին՝ դառնալով թեմի առաջնորդանիստը:

Թեմի վերաբացումից հետո՝ 33 տարիների ընթացքում, թեմի տարածքում կառուցվել և վերանորոգվել են հարյուրից ավելի վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ, հրատարակվել և վերահրատարակվել է մեծաքանակ գրականություն: 2019 թ. ապրիլի 7-ին՝ ս. Աստվածածնի Ավետման տոնին, թեմի վերաբացման 30-ամյակի առիթով օծվել է մայրաքաղաք Ստեփանակերտի նորակառույց Սբ. Աստվածածին Մայր տաճարը: Արցախի թեմը մշտապես իր ուշադրության ու հոգածության կենտրոնում է պահել մեր ժողովրդի անվտանգային և սոցիալական հարցերը թե՛ առաջին պատերազմի (1992–1994) ընթացքում և թե՛ ներկայիս հետպատերազմական շրջանում: Բոլոր մարտական ճգնաժամերի ընթացքում Արցախի թեմն իր հոգևորականներով ու եկեղեցական կառույցներով մշտապես եղել է ազգային պայքարի կիզակետում: Չնայած ստեղծված բարդ իրավիճակին՝ այսօր Արցախի թեմի նորանշանակ առաջնորդ Ս. Վրթանես Եպս. Աբրահամյանի գլխավորությամբ և եռանդուն ջանքերով թեմը կրկին կանգնած է քրիստոնեական առաքելության ճանապարհին: Այդ ընթացքում մեր ամենօրյա պարտականությունն է նաև երկրի պահպանումն ու ժողովրդի հոգևոր վերազարթոնքը:

Հատկապես 2020 թ. պատերազմից հետո, աղոթակից քրիստոնյա եղբայրների ու քույրերի մասնակցությամբ, միջեկեղեցական արդյունավետ ու ամրապնդվող կապերի շնորհիվ բազում սոցիալական ծրագրեր են կյանքի կոչվել Արցախի թեմում, որոնք ոչ միայն նյութապես աջակցում են կարիքավոր մարդկանց, այլև խթանում

են հավատքի շարունակական զարթոնքը:²⁰ Վերջին պատերազմն անշուշտ բազում մարդկային կյանքեր խլեց ու նորանոր աղետների դռներ բացեց սերունդների առաջ: Կորցրեցինք Արցախի տարածքի երեք քառորդը: Աղբբեջանի կողմից օկուպացված տարածքում մնացին թվով 211 եկեղեցի ու վանք: Լիահույս եմ, որ հայ ազգն իր միասնությամբ ու համաշխարհային հանրության համատեղ ջանքերի գործադրմամբ կկարողանա կրկին աղոթք հնչեցնել բոլոր այն եկեղեցիներում ու վանքերում, որոնք 2020 թ. ալվերիչ պատերազմից հետո մնացին հակառակորդի հսկողության ներքո: Ցավով պետք է նշել, որ Աղբբեջանը կրկին հերթական սադրիչ գործողություններով խաթարում է արցախահայության բնականոն կյանքը: Կեղծ բնապահպանական պատճառաբանությամբ 2022 թ. դեկտեմբերի 12-ից աղբբեջանցիները փակել են Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ Բերձորի/Լաչինի միջանցքը:²¹ Աղբբեջանի կողմից հայոց պատմական հողի վրա իրագործվող բռնապետությունն ու ցեղասպանությունը համաշխարհային հանրության հետ մեկտեղ անհապաղ պետք է կանխել:

Գրականություն

Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան 1983:

Անանուն, Կեանք և վարք Վաչագան արքայի, առաջաբանը և քնն. բնագիրը Ա. Յակոբեանի, Մատենագիրք Հայոց, հ. Գ, Անթիլիաս 2004:

Ասորի, Միխայել, Ժամանակագրություն, Երևան 1871:

Բարխուդարյան Ա. (կազմ), Դիվան հայ վիմագրության, Պ. 5. Արցախ, ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան 1982:

Բուզանդ, Փաւստոս, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Ա, առաջաբանը Պ. Մուրադեանի, Կ. Իզբաշեանի, Անթիլիաս 2003:

Երիցեան, Դ. Աղեքսանդր, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, Մասն Բ, Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս VII Կարբեցւոյ և «Պօլօժէնիէ» (1831-1842 թ.), Թիֆլիս 1895:

Կաղանկատուացի, Մովսէս, Աղուանից աշխարհի պատմութիւն, Մոսկվա 1860:

Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան 1981:

Հարությունյան, Բ., Մեծ Հայքի հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը

387-451 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, թ. 2, Երևան 1976:

Harutyunyan, Harutyun G., Abgeschnitten. Die Blockade und humanitäre Krise von Berg-Karabach [Մեկուսացված. Լեռնային Ղարաբաղի շրջափակումն ու հումանիտար ճգնաժամը], in: Religion und Gesellschaft in Ost und West, Institut GzW 5/2023, 9-11:

Harutyunyan, Harutyun G., Eine traumatisierte Gesellschaft: Armenien ein Jahr nach dem Karabach-Krieg [Տրավմայի ենթարկված մի հասարակություն. Հայաստանն Արցախյան պատերազմից մեկ տարի անց], in: Nachrichtenendienst Östliche Kirchen, 27. Januar 2022, unter: <https://noek.info/hintergrund/2249-eine-traumatisierte-gesellschaft-armenien-ein-jahr-nach-dem-karabach-krieg> (հարցվել է 1.6.2023):

Ջալալեանց, Սարգիս արք., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տիֆլիս 1858:

Նարիբյան, Ն., Վաչագանի վեպը և խաչի պաշտամունքի առանձնահատկությունները վաղքրիստոնեական Սղվանքում, Բանբեր Մատենադարանի, հ. 29, Երևան 2020, 239-272:

Մաղալյան, Ա., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը,

20 Այս մասին տե՛ս օր. Harutyunyan, Eine traumatisierte Gesellschaft:

21 Harutyunyan, Abgeschnitten. Die Blockade und humanitäre Krise von Berg-Karabach, 9-11:

- Պատմաբանասիրական հանդես, թ.3, Երևան 2008, 268–271:
- Մկրտումյան, Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան 2006:
- Յակոբեան, Ալեքսան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար, Երևան 2020:
- Տաշեան, Յակովբս, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա, Վիեննա 1895:
- Ուլուբաբյան, Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցիներ և մշակույթը, Երևան 1998:
- Берже, Ад. (изд.), Акты, собранные Кавказской археографической комиссией, Архив Главного Управления Наместника Кавказского, том V, Тифлис 1873:
- Положение об управлении делами Армяно-Григорианской церкви в России (11.03.1836), տես՝ <https://erevangala500.com/upload/pdf/1324321669.pdf> (հարցվել է 19.7.2023):
- Юзефович, Т. (изд.), Договоры России с Востоком. Политические и торговые, С. Петербург 1869:

Հեղինակ

Սահակ վրդ. Շաքարյան

ՀԱԵ Արցախի թեմի փոխառաջնորդ և Գանձասարի վանահայր, Արցախ:

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution–ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.